Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	<<Փոխներգործուն մեթոդների կիրառումը հասարակագիտության դասերին>>
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Արմենուհի Հարությունի Ներսեսյան Մանկավարժ +7494713605 armenuhinnersisyan896@gmail.com Պատմություն,հասարակագիտություն,ՀԵՊ 6-12-րդ դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	ՀՀ Արարատի մարզի Ծաղափի "Լ.Ղազարյանի անվան միջնակարգ դպրոց"ՊՈԱԿ,Արարատյան 15 shaghap@school.am shaghap.schoolsite.am

Բովանդակություն

Հետազոտական աշխատանք.....1
Տիտղոսաթերթ.....1
Բովանդակություն.....2
Ներածություն.....3
Պարագրաֆներ/մասեր.....5
Օգտագործված մեթոդներ.....5
Գրականության ակնարկ.....5-25
Հետազոտության ընթացքը.....25-31
Եզրակացություններ,առաջարկություններ.....32-33
Օգտագործված գրականության ցանկ.....34
Հավելվածներ.....35-36

Նպատակը եւ հետազոտական հարցը	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ Ժամանակակից մեթոդների ու հնարքների օգտագործումը դասագործընթացում և համապատասխան կիրառումը առօրյայում մեր նպատակներին հասնելու լավագույն միջոցներն են՝ պահպանելով, անշուշտ, համապատասխան առարկայական չափորոշիչները: Գլխավոր նպատակը աշակերտի անձի ամբողջական զարգացումն է: Իսկ անհատի զարգացման միջոցը, որը բացահայտում է նրա ներքին ընդունակությունները, ինքնուրույն իմացական և մտավոր գործունեությունն է: Հետևաբար, ուսուցչի խնդիրն է դասի ժամանակ ապահովել այնպիսի գործունեություն, որին նպաստում են ժամանակակից ինտերակտիվ տեխնոլոգիաները: Այս դեպքում աշակերտն ինքն է բացում դեպի իմացություն տանող ուղին: Գիտելիքների յուրացումը նրա գործունեության արդյունքն է: Ըստ այդմ էլ մեր հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել,բացահայտել և ներկայացնել սովորողների համագործակցությունը դասապրոցեսի ընթացքում՝ միմյանց հետ: Ներկայացնել համագործակցության առանձնահատկությունները, դրական և բացասական կողմերը փոխներգործուն մեթոդների կիրառման ժամանակ: Այդ նպատակով հետազոտական հարցը սահմանվել է այսպես՝ 1.Ինչպես կիրառել փոխներգործուն մեթոդները հասարակագիտության դասերին՝Ծաղափի միջնակարգ դպրոցի օրինակով:

Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	քննադատական մտածողությունը, ստեղծագործական մտածողությունը, հաղորդակցությունը, համագործակցությունը: Սովորաբար կոմպետենցիաները միավորում են գիտելիքները, հմտությունները
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Միջին և ավագ դպրոցի սովորողներ 19՝ իգական,38՝արական

Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Օգտագործված մեթոդները Կիրառեցինք.որակական մեթոդներ «Ուսուցման ավանդական և փոխներգործուն մեթոդների կիրառումը առարկայի շրջանակներում» թեմայով կատարել ենք հետազոտական աշխատանք: Հետազոտությունը կատարել ենք Ծաղափիի միջնակարգ դպրոցում: Հետազոտական աշխատանքը կատարելիս օգտվել են զրույցի, դիտարկման, վերլուծական-համադրական մեթոդներից: Հետազոտությունն անցկացրել ենք երկու փուլով. Առաջին փուլում կիրառել ենք զրույցի և դիտարկման մեթոդները: Հետազոտությունն անցկացվել է Ծաղափի միջնակարգ դպրոցի սովորողների հետ: Հետազոտությունը կատարվել է դպրոցի 57 սովորողների հետ մեկ ուսումնական շաբաթի ընթացքում: Հետազոտությունը նպատակ ուներ հասկանալու, թե արդի հանրակրթական դպրոցներում, որ մեթոդների կիրառումն է բերում ցանկալի արդյունքի: (Ավանդական և փոխներգործուն) Հետազոտության երկրորդ փուլում օգտագործել ենք վերլուծական և համադրական մեթոդը հետազոտության արդյունքների վերլուծության և սխեմատիկ ներկայացման համար:

Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	12.-15.2023թ

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	**ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ** Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը՝ որպես հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական միջոցներ, ամրագրվել են դեռևս 1990-ականներին, երբ ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների կողմից ընդունվեցին «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան» (1989թ., ՄԱԿ) և «Կրթությունը բոլորի համար համաշխարհային հռչակագիրը» (2002թ., Դակար): Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը: Համենայնդեպս, բիզնես ընկերությունները հասկացել են, որ մարդու վրա ազդելու համար առաջնայինը նրա ուշադրությունը գրավելն է: Եթե կարողանաք մարդու ուշադրությունը գրավել, ապա կարող եք տիրանալ նրա ժամանակին, փողերին ու ազդել նրա վրա:

	Դպրության 1600-ամյա պատմություն ունեցող Հայաստանում ևս կրթությանը միշտ առանձնահատուկ նշանակություն է տրվել; Իր սկզբնավորման ժամանակներից հայ դպրոցը եղել է ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման պատվարը և առաջընթացի գրավականը; Հայաստանում կրթությունը ավանդաբար բարձր վարկանիշ է ունեցել; Այսօր էլ պետական ու ազգային խնդ:իր է համարվում կրթության համակարգի ապահովումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը, դասավանդման նոր մեթոդների կիրառումը Դասավանդման ընթացքում մեթոդների հնարների կիրառումը նպաստում է սովորողների մոտ դասի յուրացմանը, նյութի կամ թեմայի ավելի մատչելի հասկանալուն ու ամրապնդում է գիտելիքները:

Կյանքի արագ ընթացքին զուգահեռ, ամեն տարի, ամեն օր ուսուցման բնագավառում հայտնվում են նորարարություններ, որոնց ներմուծումը կրթական ոլորտ նպատակ է հետապնդում հեշտացնելու և ավելի արդյունավետ դարձնելու դասաժամը, մատչելի դրածնելու դասավանդելիք նյութը: Քանզի ապրում ենք տեխնիկապես հագեցած ժամանակաշրջանում, հասկանալի է, որ կրթական ասպարեզում անհրաժեշտություն կա ինտերակտիվ ուսուցման իրականացման, որը կանցկացվի տեխնիկական տարբեր միջոցների օգնությամբ: Ինտերակտիվ մեթոդն առավել ուսումնասիրված և արդյուանվետ մեթոդ է համարվում, այդ իսկ պատճառով փորձեցինք մենք էլ մեր հետազոտական աշխատանքը ներկայացնել այս մասով: Ըստ մեր ունեցած վարկածի, ինտերակտիվ մեթոդի շնորհիվ նոր դասավանդվելիք նյութը կհետաքրքրի սովորողներին, առավել հեշտ կյուրացնեն նոր նյութը:
<<ՈՒսուցման մեթոդ>> հասկացությունը իր մեջ ներառում է երեք հիմնական խնդիր.
-ինչ սովորեցնել(կրթության բովանդակություն)
-ինչու սովորեցնել(կրթության նպատակներ)
-ինչպես սովորեցնել(ուսուցման մեթոդիկա):

Ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝ ավանդական և նոր ժամանակակից մեթոդներ:
Ավանդական են համարում բացատրական զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության (գիտելիքի) պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը:
Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը:
Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ:
Հասարակագիտության դասավանդման ժամանակ փոխներգործուն մեթոդների և հնարների կիրառումը հրաշալի արդյունք կարող է ապահովել, երբ խոսքը վերաբերում է սովորողների շրջանում ճանաչողական կամ ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև սովորողների ու մանկավարժների միջև փոխազդեցությանը Փոխներգործուն մեթոդների կիրառման կանոններն են. ա. սովորողներից ոչ մեկը չի կաշկանդվում՝ մտածելով, որ ինքը կարող է սխալվել, բ. դիմացինի կարծիքը չի մերժվում ոչ մեկի կողմից, գ. ցանկացած կարծիք կամ գաղափար խրախուսվում է:

	Փոխներգործուն մեթոդներն արդյունավետ են հատկապես խմբային աշխատանք իրականացնելիս: Ուսուցման փոխներգործուն մեթոդները և դրանց առավելությունները Ինչ, ինչու և ինչպես, յուրաքանչյուր ուսուցիչ դասարան մտնելուց առաջ հավանաբար ինքն իրեն տալիս է այս հարցերը, որն է կրթության նպատակը և ինչ պետք է նա սովորեցնի աշակերտին: Ուսուցման մեթոդը մանկավարժական գրականության մեջ բազմաթիվ, երբեմն իրարամերժ բնութագրումներ կարող է ունենալ, իբրև՝ ● Ուսուցիչ դեպի աշակերտ գնացող մտքի ճանապարհը ● Սովորողների ճանաչողական գործունեության կազմակերպման հիմքում ընկած տրամաբանական կատեգորիա ● Մանկավարժի և սովորողի՝ ուսուցման նպատակներին ուղղված և որոշակիորեն կարգավորված գործունեություն: ● Ուսուցչի և աշակերտի համագործակցուէյան եղանակ: Գոյություն ունեն ուսուցման մեթոդների դասակարգման բազմաթիվ տարբերակներ, որոնց հիմքում դրվում են հետևյալ հատկանիշները, ● Ճանաչողական աղբյուրները(ուսուցման խոսքային, դիտողական, գործնական մեթոդներ) ● Տրամաբանական սկզբունքներ (ուսուցման վերլուծական-համադրական, ինդուկտիվ-դեդուկտիվ մեթոդներ)

	• Ուսուցման տիպը (ուսուցման բացատրական-մեկնաբանական,պրոբլեմային-զարգացնող մեթոդներ) • Դիդակտիկ նպատակները և գործառույթները (խթանման, կազմակերպման և վերահսկաման մեթոդներ) • Ուսուցչի գործունեության տեսակը (շարադրման, ինքնուրույն ուսումնական գործունեության կազմակերպման մեթոդներ) և այլն: Բազմաթիվ հիմնական մեթոդական նորարարություններ այսօր կապվում են ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման հետ: Ինտերակտիվ նշանակում է փոխանցել կամ զրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի հետ:Այն ուսուցողական տեխնոլոգիա է՝ հիմնված խմբի անդամների փոխազդեցության և ուսումնառության խնդիրների լուծման, սովորողի ազատության հետ: Չկան ինտերակտիվ մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր: Ցանկացած դասարան, դասապրոցես եզակի է, անկրկնելի: Ուսուցչի ծշխնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել եզակի իրավիճակին:

	Մեթոդների կիրառման դեպքում կարող են առաջանալ դժվարություններ, մասնավորապես՝ ժամանակային առումով: Այդ դեպքում կարելի է կիրառել ոչ թե մեթոդն ամբողջությամբ, այ դրա առանձին տարրեր կամ հարմարեցնել դասացուցակը՝ կազմելով կրկնակի ժամեր Կարելի է նաև մեթոդներն օգտագործել արտադասարանական և նախասիրական պարապմունքների ընթացքում կամ կազմակերպել բաց դասեր, նկատի ունենալով նաև որ շատ մեթոդներ լուրջ նախապատրաստական աշխատանք են պահանջում: ՈՒսուցմանպրոցեսումտարբերումեն դասավանդմանպասիվ, ակտիվևինտերակտիվմեթոդներ: Պասիվ մեթոդը իրենից ներկայացնում է ուսուցիչ - աշակերտ կապը:Այս դեպքում ուսուցիչը հիմնական գործող անձն է, որը ղեկավարում է դասընթացը, իսկ աշակերտները պասիվ լսողներ են:

	Ուսուցիչ աշակերտ կապը իրականացվում է հարցումի կամ համագործակցային ուսուցման ժամանակ: Խմբի բոլոր անդամները պատասխանատու են դառնում նյութը յուրացնելու համար: Խմբային աշխատանքի մի մասը կարելի է առանձնացնել և կատարել անհատապես, սակայն մեծ մասը պահանջում է փոխգործուն աշխատանք, ընդ որում՝ խմբի անդամները մշտապես արձագանքում են միմյանց կատարած աշխատանքին, հարցեր են տալիս, քննարկում են կատարած եզրահանգումները և այլն: Փոխներգործուն մեթոդներով ուսուցման ժամանակ սովորողները դրսևորում են բարձրակարգ մտածողություն, նյութի ավելի խորքային ընկալում, ավելի լուրջ վերաբերմունք ուսումնառության գործընթացին: Փոխներգործուն մեթոդները պետք է կիրառել ուսուցման գործընթացի այն հատվածում,երբ անհրաժեշտ է զարգացնել սովորողի մտածողությունը ,ճանաչողական ակտիվությունը,հաղորդակցական կարողությունը: Փոխներգործուն մեթոդներով ուսուցումը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ընթացքում մասնակցելու ողջ դասարանին,քանի որ ուսուցչի կողմից չի մատուցվում պատրաստի գիտելիքները,այլ հնարավորություն է տրվում սովորողներին ակտիվացնել իրենց գիտելիքները,հիշողությունը,ինչպես նաև պրակտիկորեն ձեռք բերել նորանոր գիտելիքներ և հմտություններ:

	«Ուսուցումը բնորոշելիս կարևորվում է հատկապես «ինչպե՞ս սովորեցնել» հարցին ուշադրություն դարձնելը, քանի որ ուսուցման ողջ գործընթացի արդյունավետությունը դրական իմաստով պայմանավորվում է այդ հարցի պատասխան դարձած ուսուցման մեթոդների տեսությամբ»[1] Ուսուցիչը պետք է կարողանա ընտրել ուսուցման հենց այն մեթոդները, որը կոնկրետ իրավիճակում ավելի նպատակահարմար է և գլխավորը, կարողանա ապահովել նրա իրականացման բարձր արդյունավետությունն ապահովող բոլոր պայմանները: Այս առումով անհրաժեշտ է կատարել մեթոդի ընտրության չափանիշների խորը վերլուծություն՝ հաշվի առնելով հասարակության կողմից ներկայացվող նոր պահանջները, ուսուցչի փոփոխվող դերը, սովորողի անհատական առանձնահատկությունները և գոյություն ունեցող տարբեր հարաբերակցությունները: Կան մի շարք գործոններ,որոնք ազդում են մեթոդների ընտրության վրա. 1. ուսուցման նպատակները,խնդիրները,բովանդակությունը, 2. ուսուցման նյութի քանակը և բարդությունը, 3. սովորողների պատրաստվածության մակարդակը, 4. ուսուցման կազմակերպման պայմանները,

[1] Տե՛ս, Մանուկյան Ս., Ընդհանուր մանկավարժագիտություն, նոր դասընթաց, ուսումնական ձեռնարկ, Երկրորդ բարեփոխված հրատարակություն, Եր., «Զանգակ 97», էջ 105:

	5. սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները, 6. ուսուցչի պատրաստվածությունը Փոխներգործուն մեթոդները պետք է կիրառել ուսուցման գործընթացի այն հատվածում,երբ անհրաժեշտ է զարգացնել սովորողի մտածողությունը,ճանաչողական ակտիվությունը,հաղորդակցական կարողությունը:Փոխներգործուն մեթոդներով ուսուցումը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ընթացքում մասնակցելու ողջ դասարանին,քանի որ ուսուցչի կողմից չի մատուցվում պատրաստի գիտելիքները,այլ հնարավորություն է տրվում սովորողներին ակտիվացնել իրենց գիտելիքները,հիշողությունը,ինչպես նաև պրակտիկորեն ձեռք բերել նորանոր գիտելիքներ և հմտություններ: Փոխներգործուն մեթոդների կիրառումը իրականացվում է հատուկ ռազմավարությամբ: Այդ քայլերն են. 1. Սովորողներին ծանոթացնել՝համառոտ ներկայացնել ընթերցանության համար նախատեսված առաջադրանքը: 2. Նախօրոք կազմել փոխներգործուն ընթերցանության ուղեցույց՝զույգերով կամ խմբերով լրացնելու համար: Սովորողները հանձնարարված նյութը կարդալով համապատասխան լուսանցքում նշում են առանձին պարբերություն կամ նախադասություն:

Փոխներգործուն մեթոդների իրականացման ժամանակ կիրառվող նշաններն են.

v-այն ինչն արդեն սովորողին հայտնի է

+ ինչն է կարդացողի համար հետաքրքիր ու անսպասելի

- ինչն է հակասում կարդացողի պատկերացումներին

? կարդացողը ցանկանում է մանրամասն իմանալ ինչ-որ բանի մասին

1.Մտածիր-զույգ կազմիր

Այս մեթոդ կիրառվում է հետևյալ հնարով

1. Առաջին փուլում սովորողներն ինքնուրույն մտածում են առաջադրանքի շուրջ:
2. Երկրորդ փուլում զույգերով քննարկում են իրենց տեսակետը:
3. Երրորդ փուլում զույգերն իրենց տեսակետը ներկայացնում են ամբողջ դասարանին:

ԳՈՒՍ Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորեցի

ԳՈՒՍ մեթոդը 3 սյունյակից բաղկացած մի աղյուսակ է և կարդալու ընթացքում կարող է դառնալ սովորողի համար ուղեցույց:

ԳՈՒՍ մեթոդի քայլերն են.

գծում ենք երեք սյունյակից բաղկացած աղյուսակը,

1. առաջին (Գ-ինչ գիտեն արդեն) սյունյակում նշում ենք այն գիտելիքները,որոնք մինչև թեման ուսումնասիրելը գիտեն սովորողները, երկրորդ սյունյակում:

	2. Սովորողներին հարցնում ենք թե թեմայի հետ կապված ինչ հարցեր ունենք,և իմացածը գրանցում ենք աղյուսակի (ՈՒ-ինչ ենք ուզում սովորել)սյունյակի մեջ,միաժամանկ դասակարգում ենք հարցերը: 3. Հանձնարարել կարդալ ընտրված հատվածը և գտնել այն մասերը,որոնք պատասխանում են կազմած հարցերին: 4. Կարդալն ավարտելուց հետո լրացնել երրորդ սյունյակը (Ս-սովորել եմ) **Հնգյակ մեթոդ** Հնգյակ մեթոդի կիրառման ժամանակ ընդհանրացվում են առկա գիտելիքները.մի քանի բառով ներկայացվում են մտքերը,պատկերացումները: Հնգյակ մեթոդով աշխատելիս դասարանը բաժանում ենք զույգերի և յուրաքանչյուր զույգ պետք է տրված թեմայով գրի հնգյակը: Այս մեթոդի կիրառման քայլերն են. 1. առաջին տողը գրում ենք մեկ գոյական 2. երկրորդ տողը գրում ենք 2 ածական,որը նկարագրում է հասկացությունը 3.երրորդ տողը բաղկացած է 3 բառից,որոնք արտահայտում են հասկացության հետ կապված գործողություններ՝դերբայներ 4. չորրորդ տողը ներկայացնում է 4 բառից կազմված մի արտահայտություն,որով հասկացության նկատմամբ դրսևորվում է զգացմունքը կամ վերաբերմունքը

	5. հինգերորդ և վերջին տողը մեկ հոմանիշ բառ է,որն այլ կերպ է արտահայտում հասկացությունը:

	Պրիզմա Այս մեթոդը կարող է կիրառվել և դասի սկզբնամասում և վերջում կապ հաստատելով սովորողների ունեցած գիտելիքների,պատկերացումների և ուսուցանվող նյութի միջև: Պրիզմայի կատարման քայլերն են. 1. Տրվում է մեկնաբառը՝այն հիմնական հասկացությունը,որն ուսումնասիրվելու է: 2. Գծապատկերի մյուս երկու վանդակներում առանց քննարկման լրացվում են սկզբնաբառի հետ ասոցացվող առաջին երկու պատահական բառերը,այնուհետև լրացվում են նախորդ երկու բառերին ասոցացվող բառեր: 3. Պրիզման ավարտվում էվերջնաբառով: Պրիզմա մեթոդի իմաստը սկզբնաբառի և վերջնաբառի միջև տրամաբանական կապն է: պրիզմա մեթոդի մեկ այլ տեսակ էլ է կիրառելի.ուսուցիչը լրացնում է սկզբնաբառը և վերջնաբառը,սովորողները պետք է լրացնեն բաց վանդակները: **Տ-աձև աղյուսակ**

Տ-աձև կիրառվում է միևնույն հասկացության խնդրի երկու կողմերը համեմատելու համար:Այն կազմված է երկու բաժնից,որտեղ լրացվում են միևնույն հասկացության,խնդրի հակադիր որակները,դրական կամ բացասական կողմերը:Տ տառը հիշեցնող աղյուսակը նպատակահարմար է քննարկումների ժամանակ,երկու տարբեր պատասխանների՝ կողմ/դեմ,այո/ոչ,կամ հակադրություն/համադրություն արտահայտող գրառման համար:

Վեննի դիագրամ

Վեննի դիագրամը կազմվում է 2 և ավելի շրջանների միջոցով,որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում:Այս մեթոդը կարելի է կիրառել թեմաների կամ գաղափարների ընդհանրությունները և առանձնահատկությունները ցույց տալու նպատակով:

Խճանկար կամ Ջիգսո

Խճանկար կամ Ջիգսո ուսուցման մեթոդը հեղինակն է Տեխասի համալսարանի ամերիկացի սոցիոլոգ և հոգեբան Էլիոթ Արոնսոնը(1971թ.): Այս մեթոդը կարելի է կիրառել տարբեր ձևերով.

1.Առաջադրանքի միջոցով աշակերտները կարող են դասագրքի տրված գրքից տարբեր հատվածներ կարդալ..

2. Հանձնարարված թեմայի սահմաններում կարող են հետազոտել տեքստի բառապաշարը,հիմնական գաղափարը,քերականությունը,ոճը...

3. Սովորողները կարող են խճանկարը կիրառել առանց հետազոտությունների նախագծեր իրականացնելիս:

Այս մեթոդին բնորոշ հատկությունն այն է,որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար,հանդես են գալիս և սովորողի և սովորեցնողի դերերում:

Ձնագնդի

Այս մեթոդը արդյունավետ է կիրառել 2-4 հոգանոց խմբերում:Այն սովորողների կարծիքների փոխանակման,ընտրության,դրանց հավաքագրման և խմբերի ամբողջացումն է:

Ձնագնդի մեթոդը կիրառվում է հետևյալ քայլերով.

1. Սովորողներին ներկայացնել որևէ պատմություն կամ առաջադրանք:
2. Անհատական առաջադրանք:Ինչ միտք է ծագում առաջին հերթին:Գրել կարիքների կամ գաղափարների ցանկ՝այդ պատմության կամ առաջադրանքի վերաբերյալ(4 րոպե)
3. Կազմել զույգեր և միմյանց ներկայացնել անձնական կարծիքները...(6 րոպե)

4. Կազմել 4 հոգանոց խմբեր ներկայացնել զույգերով կազմած կարծիքները և նորից ձևակերպել 4 ընդհանուր կարծիք ամբողջ խմբի համար...(8 րոպե)
5. Երկուական 4 հոգանոց խմբերը միանան 8 հոգանոց մեծ խմբեր:Խմբերը ներկայացնեն իրենց կարծիքները,պարզեն նմանություններն ու տարբերությունները:Կրկին ձևակերպել 4 ընդհանուր կարծիք ամբողջ խմբի համար:

Ելքի քարտեր լրացում

Ելքի քարտերը լրացվում են 3-2-1 մեթոդով,որը կատարվում է <u>անդրադարձի ընթացքում:</u>
Սովորողները պետք է.

1. Գրեն երեք բան,որ սովորեցին այդ դասի ընթացքում
2. Երկու բան, որ կարևոր և արդյունավետ են համարում
3. Մեկ բան,որ վաղն անմիջապես կկիրառեն
4. Առաջարկություններ

Մտածող գլխարկներ

Խմբային քննարկումների ժամանակ ավելի արդյունավետ է <,Մտածող գլխարկների>> կիրառումը,որն օգնում է հետևողականորեն պլանավորելու մտածելու ընթացքը:

ՍՊԻՏԱԿ ԳԼԽԱՐԿ

Հարցի վերաբերյալ ներկայացնել միայն փաստարկներ.

1. Հայտնի է,որ..
2. Փաստ է,որ..
3. Ընդունված է,որ…
4. Հետազոտությունները ցույց են տվել,որ..

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

Հարցի վերաբերյալ արտահայտում է հույզեր,զգացմունքներ,վերաբերմունք.

1. Ինձ դուր էգալիս..
2. Հաճելի է,որ..
3. Ինձ դուր չի գալիս..
4. Սարսափելի է.որ..
5. Տհաճ է որ…

ԴԵՂԻՆ ԳԼԽԱՐԿ

Ներկայացնել հարցի դրական կողմերը,առավելություններ.

1. Լավ է,որ…
2. Հրաշալի է,որ
3. Շատ կարևոր է,որ..
4. Սա խթանում է..
5. Նպաստում է..

ՍԵՎ ԳԼԽԱՐԿ

Ներկայացնել հարցի բացասական կողմերը,վատ հետևանքները.

1. Չի կարելի..
2. Վտանգավոր է..
3. Խոչընդոտում է..
4. Խանգարում է.. ԿԱՆԱՉ ԳԼԽԱՐԿ

	Ներկայացնել հարցի զարգացումն ու հեռանկարները. 1.Սա կարող է օգնել,որ.. 2.Սա հնարավոր է դարձնում,որ.. 3.Կարելի է ասել,որ.. ԿԱՊՈՒՅՑ ԳԼԽԱՐԿ Վերլուծել քննարկման ընթացքը. 1.Եկեք փորձենք հարցն նայել այլ տեսանկյունից

Հետազոտության ընթացքը	<<Փոխներգործուն մեթոդների կիրառումը հասարակագիտության դասերին>> թեմայով կատարել ենք հետազոտական աշխատանք: Հետազոտությունը կատարել ենք Ծաղափիի միջնակարգ դպրոցում: Միջին և ավագ դպրոցում փոխներգործուն մեթոդների կիրառման միջոցով աշակերտների ստեղծագործական կարողությունների ձևավորումը ուսումնասիրելու նպատակով իրականացրել եմ աշխատանքներ 7-րդ, 8-րդ և 9-րդ,10/11-րդ համակազմ և 12-րդ դասարաններում: Հետազոտության առաջին փուլում իրականացրել ենք մշտադիտարկում՝ դիտումներ, դասալսումներ, պարզելու համար,թե ինչ արդյունք է տալիս փոխներգործուն մեթոդների կիրառումը միջին և ավագ դպրոցում: Հետազոտական աշխատանքը կատարելիս օգտվել են զրույցի, դիտարկման, վերլուծական-համադրական մեթոդներից: Հետազոտությունն անցկացրել ենք երկու փուլով. Առաջին փուլում կիրառել ենք զրույցի և դիտարկման մեթոդները: Հետազոտությունն անցկացվել է Ծաղափի միջնակարգ դպրոցի սովորողների հետ: Հետազոտությունը կատարվել է դպրոցի 57 սովորողների հետ մեկ ուսումնական շաբաթի ընթացքում: Հետազոտությունը նպատակ ուներ հասկանալու, թե արդի հանրակրթական դպրոցներում, որ մեթոդների կիրառումն է բերում ցանկալի արդյունքի: (Ավանդական և փոխներգործուն)

Հետազոտության երկրորդ փուլում կատարել ենք աշխատանքներ բացահայտելու աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացվածության 0 2 4 6 8 10 12 14 16 0 2 4 6 8 10 12 14 16 20 մակարդակը: Որպես հետազոտության հիմք ընդունել ենք ստեղծագործականության հետևյալ բնութագրիչները՝աշակերտի ձգտումը մտածել օրիգինալ,ոչ ստանդարտ, ինքնուրույն գտնել և ընդունել որոշումներ, դրսևորել իմացական հետաքրքրություն, բացահայտել նորը,անծանոթը,ինչպես նաև առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը: Դիտումներն ու կատարած դասալսումները երկու զուգահեռ դասարաններում ցույցտվեցին, որ աշակերտների մեծ մասի մոտ այն միջին մակարդակի է:

Հետազոտության հաջորդ փուլում իրականացվեց փորձարարական աշխատանք՝միտված աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Իմաստի ընկալման փուլում աշակերտներն ընթերցեցին հանձնարարված լրացուցիչ նյութը, այնուհետև իրենց կարծիքն արտահայտեցին լրացուցիչ նյութի

	բովանդակության վերաբերյալ: Նրանց լսելուց հետո անդրադարձանք մտագրոհին՝կատարվեցին լրացումներ,քննարկումներ: Այնուհետև աշակերտներն ընտրեցին իրենց համար դերեր և դերային խաղով ներկայացրեցին բնագիրը: Կշռադատման փուլում կիրառվեց <<Քառաբաժան>> մեթոդը:Աշակերտներին բաժանեցինք աշխատանքային խմբերի, և նրանք պատասխանեցին քննարկման հարցերին. :

	Դասի խթանման փուլում Զրույցի մեթոդն կիրառելով՝ուսուցչուհին սովորողներին առաջադրեցինք հարցեր թեմայի առանցքային մասերի վերաբերյալ նրանց:Մենք մեր հերթին որոշ տեղեկություններ հաղորդեցինք հանձնարարված թեմայի մասին: Զրույցի մեթոդի շնորհիվ սովորողների ուշադրությունն սևեռվեց դասանյութի այն հատվածներին,որոնց հպանցիկ էր անդրադարձվել: Իմաստի ընկալման փուլում սովորողները ընթերցեցին դասանյութը,կազմակերպվեց ուղղորդված ընթերցանություն:Այնուհետև փոխներգործուն գրառումների համակարգ մեթոդը կիրառելով ուսուցիչը հանձնարարեց դասանյութի մեջ ծանոթ տերմինները նշել V-ով, իսկ անծանոթները՝+-ով: Աշխատանքն ավարտվելուց հետո կազմակերպվեց զույգերով մտքերի փոխանակություն: Քննարկվեցին բոլոր ծանոթ տերմինները և հասկացությունները,յուրաքանչյուրը ներկայացնում էր իր իմացածը: Դասի կշռադատման փուլում կիրառվեց խճանկարի մեթոդը:Սովորողներին բաժանեցինք հենակետային խմբերի և յուրաքանչյուր խումբ ստացավ իր հանձնարարությունը (խմբի յուրաքանչյուր անդամ հանդիսանում էր որևէ ենթաթեմայի ուսումնասիրող)...

	Իմաստի ընկալման փուլում կիրառեցինք <<Փոխներգործուն նշանների համակարգ>> մեթոդը: Կշռադատման փուլում աշակերտները բաժանվեցին 4 հոգանոց խմբերի և հանձնարարվեց պատրաստել ցուցապաստառ,որտեղ պետք է արտացոլվեր այն ամենը, ինչ անհրաժեշտ է ճիշտ կեցվածք ունենալու համար:

	Կատարած ուսումնասիրություններն ու հետազոտական աշխատանքները ցույց տվեցին, որ աշակերտների ստեղծագործական կարողությունները զարգանում են դասապրոցեսում փոխներգործուն մեթոդների կիրառմամբ,աշակերտների մոտիվացիայի զարգացման և նրանց գիտակցական աշխատանքի շնորհիվ:Հետազոտվող դասարաններում բարձրացել էր ուսման արդյունավետությունը,սովորողները ավելի սիրով էին մասնակցում դասերին,փոխվում էր նրանց վերաբերմունքը դասերի նկատմամբ: Կատարած հետազոտության արդյունքները ցույց տվեցին,որ փոխներգործուն մեթոդների կիրառման ժամանակ սովորողներ մոտ հանդես է գալիս.

	Նորի նկատմամբ հետաքրքրվածություն, նախաձեռնողականություն, ակտիվություն, սխալվելու վախի նվազում, անկաշկանդվածություն,ուսման մոտիվացիայի զարգացում:

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Իրականացրեցինք հետազոտական աշխատանք Ծաղափի միջնակարգ դպրոցում և եկանք այն եզրակացության,որ ժամանակակից կրթության հրամայական է ոչ թե նախկինի նման կաղապարված ուսուցչակենտրոն կամ պասսիվ մեթոդը,այլև ակտիվ,աշակերտակենտրոն մեթոդը.այն է՝ սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում, և սովորողներն այստե ղ ոչ թե պասսիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասսիվ ուսուցման դեպքում գլխավոր դերակատարը և հիմնական հրահանգավորողը դասավանդողն է, ապա այստեղ սովորողն ու դասավանդողը հավասար իրավունքների դաշտում են: Եթե պասսիվ ուսուցմանը բնորոշ է ավտորիտար ոճը, ապա ակտիվ մեթոդների դեպքում նախապատվությունը տրվում է դեմոկրատական (ժողովրդավարական) ոճին: Ծատերը հավասարության նշան են դնում ակտիվ և ինտերակտիվ մեթոդների միջև, սակայն, չնայած իրենց ընդհանրությանը, այս մեթոդներն ունեն նաև տարբերություններ: Ինտերակտիվ մեթոդները կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից և արդյունավետ մեթոդներ:

	Այսպիսով, փոխներգործուն մեթոդները ապահովում են ՝ սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացում, կրթական գործընթացին սովորողների ակտիվ ներգրավում, ինքնուրույնության խթանում, ճանաչողական գործընթացների զարգացում-խոսք, հիշողություն, մտածողություն, ստեղծագործական մտածելակերպի զարգացում, սովորողի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում: Փոխներգործուն մեթոդներն ստեղծում են ամեն անգամ գիտելիքն ինքնուրույն <<կառուցելու>> և նորը հայտնագործելու միջավայր.ի տարբերություն պասսիվորեն ձեռք բերած <<փոխանցված գիտելիքի>>,հետազոտության շնորհիվ ակտիվորեն կառուցված գիտելիքն առավել արդյունավետությամբ է ընկալվում և յուրացվում,երկար է պահպանվում հիշողության մեջ, ունենում է կիրառական նծանակություն և այս ամենը նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը:
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. **Մանուկյան Ս.**, **Ընդհանուր մանկավարժագիտություն**, **նոր դասընթաց**, **ուսումնական ձեռնարկ**, **Երկրորդ բարեփոխված հրատարակություն**, **Եր.**,
«Զանգակ 97», **էջ 105**
2. Մ. Ա. Մկրտչյան : Կոլեկտիվ ուսուցման տարրերը: Երևան **2009. 3.**Գ.Ե.Ղույումչյան, «Մանկավարժություն»
4.. Գայանե Վարդանյան, <<Հին ու նոր մեթոդների դասավանդումը արդի փուլում>>
5. Սերոբ Խաչատրյան,<<Ուսուցման արդյունավետ հնարներ>>,Եր., **2020 5.https://hy.wikipedia.org/wiki/**

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	**ՀԱՎԵԼՎԱԾ 1** **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ** **1. Ներկայումս Հայաստանը կանգնած է լուրջ մարտահրավերների առաջ: Կրթության ոլորտը կարեւորվում է որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը:** **Տարածաշրջանային եւ համաշխարհային գործընթացներին համապատասխան ազգային կրթական համակարգ զարգացնելը ներկայիս հրամայականն է: Ըստ այդմ այն պետք է բավարարի եւ՛ յուրաքանչյուրին, եւ՛ ողջ հասարակությանն ու պետությանը, որպես հավաքական ամբողջություն:** **2. Սույն Ծրագիրը մշակվել է հաշվի առնելով՝ Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը, Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագիրը, կրթության համակարգի վերջին տարիների ձեռքբերումներն ու**

	մարտահրավերները, ինչպես նաեւ ՄԱԿ-ի «Փոխակերպենք մեր երկիրը. Մինչեւ 2030

թվականը կայուն զարգացման օրակարգը» եւ «Կրթություն 2030. Դեպի ներառական եւ արդարացի որակյալ կրթություն ու կրթություն ողջ կյանքի ընթացքում բոլորի համար» Ինչհոնի հռչակագիրը: Ծրագրի մշակման շրջանակներում իրականացվել է համակողմանի հետազոտություն՝ ուղղված ՀՀ կրթական համակարգում առկա հիմնախնդիրների եւ դրանց լուծման մեխանիզմների բացահայտմանը՝ հետեւյալ հինգ ուղղություններով. կրթության մատչելիություն, կրթության որակ, կրթության բովանդակություն, կրթության կառավարում, կրթության արդյունավետություն:

3. Առաջիկա տարիների կրթության զարգացման թիրախները, գերակայությունները եւ գործողությունների շրջանակը միտված են առկա խնդիրների լուծմանը՝ ուշադրությունն առավելապես կենտրոնացնելով կրթության առաքելության, հայրենասիրական դաստիարակության, որակյալ բովանդակության, յուրաքանչյուր քաղաքացու ինքնաիրացման հնարավորությունների ապահովման, պետության առջեւ կանգնած մարտահրավերների

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՊՐԻԶՄԱ

Մեթոդ 3, Ինտերակտիվ մեթոդ
Աշակերտ
Աշակերտ
Աշակերտ
Դասավանդող

ԵԶԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ